

Մ. ԳՈՐԿԻ



ԶԱՐԿԻ ՄԵՆԸ

891.71Մ
Գ-83

ՀԱՅՊԵՏՆԵՐԱՅ

ՀԼԿՅՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1949

- 6 NOV 2011

891-710

9-83

My

Մ. ԳՈՐԿԻ

ԶԱՐԼԻ ՄԵՆԸ

Քարգժ
Ս. ՍՈՒԳՐԱՍԵՍՆ
Նկարներ
ԵՊ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

Հ Ա Յ Պ Ե Տ Ր Ա Ս
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՄԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1940

Թարգմ. պատ. խմբագիր՝ Հր. Բոչար
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ. Ա. Արղաքանյան

М. ГОРЬКИЙ
ЧАРЛИ МЕН
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г



1179
40

Դրավիտի լիազոր՝ Զ-1036. Հրատ. 4828.


Պատկեր 210. Տիրաժ 4000.

Թուղթ 62X94. Տպագր. 1,4 մամ.

Հանձնված և արտադրության 2 մարտի 1939 թ.

Պտորագրված և տպագրության համար 14 հունվ. 1940 թ.

Հայպետհրատի I տպարան, Յերևան, 1 ենի, 65



Երջանում մի արջ հայտնվեց:

Առաջինը յերեխաները տեսան նրան: Մի անգամ, յերեկոյան նրանք գնդակ եյին խաղում անտառի մոտ, յերբ հանկարծ բացատում՝ ծառերի մեջ յերեւոց արջը, գլուխը բարձրացրեց և ողբ հոտտելով, կամացուկ մըթմըթաց: Վախեցած յերեխաները վազե-վազ գյուղ ընկան, բայց մեծերը չհավատացին նրանց. ոգոստոսի սկիզբն այն ժամանակը չէր, վոր արջերը գյուղի մոտերքում չըջեյին:

Մի քանի օրից, սակայն, գազանը նորից հայտնվեց: Անտառից նա դուրս նետվեց հենց մյն՝ միջոցին, յերբ փոստատար Ծերստերը փոստը հետը գյուղ եր մտնում: Ծերստերի ձին վախեցավ, խրտնեց, և գետին շարժված փոստատարի վոտը կտորվեց: Սա արդեն իրական գեպք էր, բայց թե դա Նէլ չդիպավ գյուղի անմիջական շահերին: Փոստը հավաքեցին, վոչինչ չէր կորել. արջի մասին նորից մոռացան...

Յեվ միայն այն ժամանակ, յերբ գազանը խեղդեց կրուկս յեղբայրների կովը, ավազ կրուկսը՝ չեկ Զեկը գնաց Չարլի Մենի մոտ:

—Բարի ո՞ր, Չարլի Մեն, —ասաց Զեկը, չեմքի վրա վորսորդի կողքին նստելով:

Մենք աչքերը կկոցեց, մտածեց ու պատասխանեց.

— Բարի ո՛ր:

— Դուք լսե՞լ եք արջի մասին, — հարցրեց Կրուկսը անմիջապես գործի անցնելով:

Չարլի Մենը, ինչպես և ամեն լուրջ մարդ, յերբեք չէր պատասխանում առանց մտածելու: Մոտ մի րոպե նա լուռ խարտում էր յերկաթը, մաքրելով թակարդի վրայի ժանգը. հետո գլուխը բարձրացրեց և նույնպես հարցրեց.

— Ձե՛կ Կրուկս, դուք ուզում եք իմանալ, թե յես, արդյոք, լսե՞լ եմ արջի մասին:

— Յես ել հենց այդ կուզեյի իմանալ, — համաձայնեց Կրուկսը:

Չարլի Մենը մի կողմ դրեց խարտոցը, մատներով սեղմեց թակարդի զսպանակը, արանքից փչեց և փոքրիկ աղտոտ սրվակից յուղ կաթեցնելով, սկսեց քսել յերկաթի վրա:

«Նա ուչ-ուչ է ածիրլվում», — մտածեց Կրուկսը, նայելով Չարլիի սպիտակ մազերով ծածկված վոսկրոտ այտերին:

— Հա՛, արջի մասին բան-ման լսել եմ, — պատասխանեց Մենը, գլխով դրական նշան անելով:

Նրա գորը աչքերը ներողամտաբար շարժվեցին ակնակապիճների մեջ: Ապա նա դանդաղ ավելացրեց.

— Մարդիկ շատ են խոսում, և միշտ մի բան լսում ես...

— Իսկ դուք ի՞նչ եք մտածում այդ մասին, Չարլի Մեն:

Այս մարդը չի սիրում ժամանակին իզուր կորցնել. նա միշտ ուղիղ գծով է ընթանում:

Մենը յուղեց թակարդի զսպանակը, մի անգամ ել վրան փչեց և մեքենան ծնկներին դնելով, դաշտի դեղին հարթության միջով սկսեց նայել դեպի հեռավոր անտառը: Վերջապես նա պատասխանեց, առանց դեմքի մկանները շարժելու.

— Ոգոստոսին յես վոչինչ չեմ մտածում արջերի մասին:

— Յես հավատացած եմ, վոր այդ բանի համար

դուք լավ հիմքեր ունեք, — ասաց Կրուկսը: — Բայց ինձ թվում է, վոր դուք վատ բան չեք արած լինի մեզ համար, յեթե սպանեք նրան, հը՞: Գիտեք, վոր յես վորսորդ չեմ, ասենք՝ ժամանակ ել չկա արջի հետեվից ման գալու... Բացի ձեզանից, վոչ վոք չի կարող գազանին սպանել... Այս բանը բոլորը գիտեն:

Չարլի Մենը վեր կացավ և ուղղեց իր յերկար ու չոր, պիրկ ջլերով ամուր մարմինը: Ապա նա աջ ու ձախ շրջեց արևից սեպցած վիզը և ձեռները գրպանները խոթելով, զարմացած ու կարուկ հարցրեց.

— Հիմա՞, ոգոստոսի՞ն:

— Հա՛, հա՛, — տաքացած վրա բերեց Կրուկսը, — դուք տեսնում եք, վոր արջն սկսում է մեր անասունները փչացնել...

Չարլի Մենը գլուխը կախ գցեց, հոնքերը բարձրացրեց և ակնհասյտնի զարմանքով ուղիղ Ձեկի դեմքին նայելով, նրան ինչ վոր բան հիշեցնող ձայնով ասաց.

— Բայց չե՞ վոր յես անասուններ չունեմ:

Այն ժամանակ Կրուկսը հասկացավ, վոր այդպես նա չի կարող Չարլիին համոզել, թե անհրաժեշտ է սպանել արջին: Յեվ նա վճռեց վորսորդի յերևակայության վրա ազդել.

— Այդ այդպես է, Չարլի Մեն, դուք անասուններ չունեք, — համաձայնեց նա և, աշխատելով իր ձայնին հուզիչ արտահայտություն տալ, շարունակեց. — բայց դուք մի տղա ու աղջիկ ունեք, ահա՛ թե ինչու՞մն է բանը: Իսկ արջի համար միևնույն է — վոչխար, թե՛ յերբեխա: Այդպե՞ս է, թե՞ չէ: Այդ գազանը խտրություն անել չգիտե... Յեվ ահա, յեթե դուք մտածում եք յերևանների մասին...

— Ասացե՛ք խնդրեմ, — ասաց Չարլին ձեռքը գրպանից հանելով ու յերեսը չփելով:

Մենը պինդ սեղմեց շրթունքները, ուսերը վեր բարձրացրեց մինչ ականջները, հետո իջեցրեց և Ձեկին նայելով, ազդու ձայնով հարցրեց.

— Այդ ինչո՞ւ, դուք, Ձե՛կ Կրուկս, կարծում եք, վոր արջն ամենից առաջ հենց միայն իմ յերբխաներին կուտի:

Շեկ Զեկն ապշեց հարցի այսպիսի պարզությունից
և պարզ ճշմարտությունից: Նա բերանը բացեց, սակայն
զարմանքից համարյա մի բոլոր վոչինչ չկարողացավ ա-
սել վորսորդի նուրբ խելքի հանդեպ: Մինչև իսկ նա վո-
տի կանգնեց և թափահարեց գլուխը, ինչպես պինչը
գնդածաղկի տված յեզն ե անում: Հետո նա բացական-
չեց.

— Դե՛հ, իհարկե, դուք սուր միտք ունեք, միտքեր
Մեն: Կայծակի բաժին լինեմ, յեթե ճիշտ չեմ ասում:
Իսկապես, ինչո՞ւ արջը հենց միայն ձե՛ր յերեխաներին
պիտի ուտի մյուսներին առաջ, հը՞: Ա՛յ թե ինչի մասին
յես չմտածեցի:

— Այո, դուք չմտածեցիք այդ մասին, թանկագլի՛ն
Կրուկս, — համաձայնեց վորսորդը:

Յերբ շեկ Զեկը Մենի մոտ եր գնում, նրան այնպես
եք թվում, վոր ամեն ինչ կկատարվի արագ և առանց
այլևայլության: Մենին նա կպատմի գազանի մասին,
Մենը կվերցնի իր հրացանը, անտառ կգնա ու կսպանի
զազանին: Արհեստով վորսորդ ե նա և նրան ձեռնտու
յե այդ: Բայց բանից դուրս ե գալիս, վոր Չարլի Մենն
իր վորոջ կարծիքն ունի առաջին հայացքից այդքան
պարզ մի խնդրի մասին: Զեկն իրեն այնպես եր զգում,
վոր կարծես շեղվել ե ճանապարհից և չգիտե՛ ո՛ւր շր-
ջի, վոր նորից կարճ և ուղիղ գծի վրա դուրս գա:

— Հա՛, հա՛, — մտադրաղ ասաց նա. — դուք իրաջ
եք, Մեն: Բոլորովին հիմք չկա կարծելու, թե ձեր յե-
րեխաներն առաջինը կդառնան արջի բաժին:

Մենը հաստատական նշան արեց գլխով: Յերկար
ժամանակ յերկուսն ել լուռ եյին, յուրաքանչյուրն իր
մտքի հետ և միևնույն ուղղությամբ՝ դեպի հեռուն,
անտառը նայելով:

Հետո Կրուկսին թվաց, վոր իր գլխով մի լավ միտք
անցավ: Զույգ աչքերը միանգամից թարթելով, դան-
դաղ և սիրաշահելով այսպես խոսեց նա.

— Բայց, Չարլի, ընդհանրապես բոլոր յերեխաներն
ել շատ սիրելի յեն, ճի՞շտ ե: Յե՛վ ձեր, և՛ իմ, և՛ թե
Ջոնսոնի յերեխաները զազանին հանդիպելու վտանգի

մեջ են... Ո՛ւր ասես, վոր չեն վաղվում նրանք, և
այնքան շատ են:

Մենը նորից հաստատական շարժում արեց գլխով
ու նկատեց.

— Այո, ճիշտ ե. յերեխաները միշտ ավելի շատ են
քան արջերը:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով, — փոքր ինչ լու-
յուց հետո հարցրեց Կրուկսը:

Չարլի Մենը հանդիստ՝ դեպի նա շրջեց իր կարմիր
յերեսը և, առանց աչքերը շարժելու, կրկնեց.

— Յես ասում եմ՝ տարվա բոլոր յեղանակներին
յերեխաներն ավելի շատ են, քան արջերը:

Շեկ Զեկը գլուխը խոնարհեց, կամենալով այդ բա-
սերի հետին միտքը հասկանալ: Մի բոլոր հետո նա
հարցրեց.

— Ասել ե, թե դուք, Չարլի, ձեզ համար անոգուտ
գործ եք համարում արջի հետ հանդիպելը, այդպե՞ս ե:

Չարլի Մենը՝ շրջանի նշանավոր վորսորդը, Զեկի
ուսին գրեց իր յերկար, յերկաթի պես ամուր ձեռքը և
թեպետ առանց վիրավորանքի, սակայն հանդիմանա-
քով լի ձայնով ասաց.

— Դե լա՛վ չե ձեր կողմից, Կրո՛ւկս, ինձ ապուշի
տեղ դնել: Ինձ թվում ե, վոր յես այդպիսի անուն չեմ
վաստակել:

— Յես բնավ չեմ ցանկանում ձեզ վիրավորած
լինել, Չարլի Մեն, — անկեղծ ու շտապ բացականչեց
Կրուկսը:

Մենն իր գորշ աչքերը հառեց շեկ Զեկի շփոթված
դեմքին և իր ասելիքն այսպես վերջացրեց.

— Բայց, թանկագլի՛նս, մարդ կամ ի՛նքը պետք ե
հիմար լինի, կամ ինձ եչի տեղ դնի, վոր ոգոստոսին
ինձ առաջարկի արջ սպանել, յերբ նրա մորթին վոչինչ
չարժե... Գո՛ւղ բայ՝), Զեկ Կրուկս:

Յեզ Չարլի մենը տուն գնաց, թողնելով, վոր շեկ
Զեկը չափի իր հիմարության խորությունը..

Իսկ արջը, այն դեպքից հետո, յերբ Չարդոտեց պա-

*). Յոկոսություն, մտք բարով

ուսի Չոնտոննի վոսկորները, վորը անտառում պտուղ
եր հավաքում, — անհետացավ շրջանից:

Չարլի Մենի դարձանայի սուր միտքն ամենից ակըն-
բախ յերևան յեկավ սե-կարմրավուն աղվեսի հազվա-
դեպ վորսի ժամանակ: Այս մասին նահանգի բոլոր լրա-
դրերը հողվածներ գրեցին, իսկ նրանցից մեկի խոմ-
բագրությունը մինչև անգամ իր հատուկ թղթակցին ու-
ղարկեց Մենի մոտ:


Մարդկային մտքի ու գաղանի խորամանկության
միջև տեղի ունեցած այդ պայքարի մանրամասն պատ-
մությունը միայն կարող է լույս ափռել Չարլի Մենի
անձնավորության վրա:

Մի անգամ անտառում թափառելիս Մենն աղվեսի
հետք գտավ և նշաններից իմացավ, վոր դրանք իսկ է
իսկ սե-կարմրավուն աղվեսն է թողել: Նա չեր ուզում
փչացնել գաղանի թանկարժեք մորթին և հաստատ վո-
րոչեց թակարդով բռնել նրան:

Ամենից առաջ պետք էր աղվեսին հարկադրել,
վոր նա չգնա այնտեղ, ուր նա սովոր էր ջուր խը-
մել ու թռչուն վորսալ, և վորտեղ (Մենը գիտեր այդ)
նա կարող էր մյուս վորսորդի թակարդն ընկնել, վորը
նույնպես հետևում էր նրան:

Մի քանի օր շարունակ Չարլի Մենը դուրս չեր դա-
լիս անտառից, մանրամասն ուսումնասիրելով աղվեսի
ճանապարհը: Յեվ յերբ նա այս բանն իմացավ այնքան
լավ, ինչպես իր հինգ մատը, նա փորեց ու արձատհան
արեց մի դեռափթիթ յեղևնի և տնկեց գաղանի ամենո-
րյա արահետի վրա այնպես լավ, վոր բացի աղվեսից
վոչ վոք չկարողանար դա նկատել:

Դեռ յերեկ իր անցած ազատ ճանապարհի վրա հան-
կարծակի հայտնված այս ծառը այսօր վտանգի նախադ-
գացումով վախեցրեց աղվեսին: Նրա համար պարզ էր,
վոր դա բնությունը չէր, վոր հանկարծ մի նոր ծառ
բացեցրեց, այլ՝ ինչ վոր մի ուրիշ ույթ. բնությունը վո-
չինչ չի ստեղծում միանգամից, մինչև իսկ Ամերիկա-
յում:



Աղվեսը փոխեց դեպի առվակ գնալու իր ճանապարհը: Չարլի Մենի ուզածն էլ հենց այդ էր: Նա շարունակեց հետեւել նրան, ինչպես նրա սովերը, ինչպես մահըն է գնում դատապարտյալի հետեւից: Բարձր հասակով, չոր ու յերկար, որեք շարունակ նա քայլում էր անտառում իր թեթև ու յերկար քայլերով, գորշ աչքերը գեանից չկտրած, հետեւելով ամեն մի ծեղի ծովածքին, նկատելով ամեն մի նոր կտրած վտարը և յուրաքանչյուր չնչին հետքը: Բացի աղվեսից, նա բոլորովին մոռացավ մյուս գազաններին, մոռացավ իր տունը, կնոջն ու յերեխաներին, շորից — հալից ընկավ և այդպես քայլում էր՝ կիսաքաղց ու մոայլ, լարված գրությունից համարյա հիվանդ:

Յերկու շաբաթից հետո նա արդեն գիտեր այն տեղը, վորտեղ աղվեսն անց էր կենում վտակով: Նա մի քար վերցրեց ու դրեց վտակի ջրի մեջ: Հինգ որ անց նա մի ուրիշ քար դրեց, իսկ առաջինը ծածկեց մամուռի բարակ շերտով: Ելի՛ մի հինգ որ, — և նա ջրի մեջ դրեց յերրորդ քարը, ապա յերկրորդը մամուռով ծածկեց և ավելացրեց առաջինի մամուռները...

Այսպես աննկատելի կերպով, մեկը մյուսի հետևից վտակի ջրի մեջ նա քարեր դրեց և մամուռ չապիկ հազարրեց նրանց, իր արածը բնության դանդաղ աշխատանքին նմանեցնելով: Հինգ հատ քար դրեց նա ջրի մեջ և այդպիսով իր աղվեսի համար մի կամուրջ ձգեց վտակի վրայով: Իհարկե աղվեսը գտավ կամուրջը, — նա չի սիրում թաթերը թրջել ջրի մեջ, — նա ոգտվեց Չարլի Մենի աշխատանքից:

Յեվ յերբ նա նկատեց աղվեսի հետքերն իր դրած քարերի մամուռի վրա, — հանեց նրանցից առաջինը և նրա տեղ դրեց մամուռով ծածկած թակարդը:

Իսկ առավոտյան, վտակին մոտենալով նա ուրախությամբ տեսավ, վոր գեղեցիկ գազանը ջարդված թաթով նստած է թակարդի մեջ՝ ջախջախված վոսկորների անտանելի ցավից ատամները բացած:

Չեռները զրպանները խորը խոթելով, թեթև ժպտալ յերեսին՝ Չարլի Մենն իր բարձր հասակով մեկ

կանգնեց վտակի ափին, նիհար, կարմրած դեմքով, վոր ծածկված էր ճերմակ մագերի խիտ կոշտուկով: Աղվեսի՛ ցավից մարած աչքերը բռնկվեցին կարմիր ու դեղին կրակով, նա ուզեց դուրս թռչել թակարդի միջից, սակայն վոսկորները ճարճտացին, և վտակի մեջ արյան բարակ շիթեր փայլեցին... Գազանը հատու հաջոց հանեց, ծվծվաց, ապա սակվեց իր տեղում:

Այն ժամանակ Չարլի Մենը մոտեցավ նրան և վարժ ձեռքով կտրեց աղվեսի վզի վոդները:

Յոթ շաբաթ շարունակ նա անընդհատ աշխատում էր՝ այս բանն անելու համար:

Սակայն՝ վերջերս ծեր Չարլին իր ձեռքով քանդեց իր տունը. նա կորցրեց խելոք մարդու համբավը: Դեպքըն այսպես յեղավ. հայտնվեց մի սև ուրուր և սկսեց հաշ ու ճիվ փախցնել գյուղից: Քանի-քանի անգամ գյուղացիք տեսան նրան, քանի անգամ կրակեցին նրա վրա, բայց միշտ անհաջող. գիշատիչ թռչունն անվնաս թռչում-գնում էր, ողի մեջ իր լայն թեւերը հանգիստ փռելով և կարծես արհամարհում էր մարդկանց թշնամությունը:

Բայց չե՞ վոր Չարլի Մենը հաջողակ էր վորսի ժամանակ, ուղիղ էր նրա աչքը և անվրեպ էր խիտում նրա հրացանը: Մի անգամ նա տեսավ, թե ինչպես ուրուրը ճանկերով մի մեծ հավ գրկած, ծանր-ծանր վեր է բարձրանում գյուղի վրայով: Մենը կրակեց. ամբողջ մարմնով թռչունը ցնցվեց ու գետին ընկավ:

Չարլին վերցրեց ուրուրին: Յերևաց, վոր կոտորակի շորշորից թռչունը խլացել է միայն, մինչև իսկ չի ել վերավորվել: Կիսախուռի աչքերով ուրուրը նայում էր վորսորդի յերեսին և գիշատիչ թռչունի հոնքերը ցնցվում էյին, ճանկերը թեթև շարժվում:

Մեծ էր այդ թռչունը, մեծ և ծանր: Նրա կիսաբաց աչքերը նայում էյին առանց յերկյուղի: Յերբեմն նա ցնցվում էր ամբողջ մարմնով. Չարլի Մենի ձեռքերը զգում էյին նրա մարմնի ջերմությունը, լսում գիշատիչ որսի բարխումը:

Մանուկներ ու կանայք մոտ վագեցին: Նրանք հայհոյում էյին հպարտ թռչնին, բուռնցքներով սպառնում,

և ամեն մեկն ուզում եր հարվածել նրան՝ փախցրած հավերի վրեժը հանելու համար:

Երկահեր Զեկի կինն առաջարկեց.

—Յերեխաների ձեռը տվեք այդ ավազակին, Չարլի Մեն. ա՛յ թե նրանք հախիցը կզան, հա՛... .

—Թռչունը կարող է նրանց աչքերը հանել, — վախեցած առարկեց մյուսը:

Պառավ Կլերը, համայնքի ամենաբարեպաշտ կինը խոսեց աղոթքներից խոստում իր թավ ձայնով.

— Ցանցա՛ռ բան սասցիք, թանկագի՛ն Կրուկս: Յերեխաները կարող են բաց թողնել այդ սարսափելի թռչունին... և նա նորից կսկսի մեր հավերը փախցնել... Պետք է ավելի լուրջ վերաբերվել նրան և իսկույն եեթ սպանել... .

Յեվ վորովհետև բոլորն էլ շատ եյին հարգում պառավ Կլերին, ուստի համաձայնեցին ուրուրին սպանելու անհրաժեշտության հետ:

Մենն իր մատների միջից բաց թողեց թռչնի վիզը և լուռ ու հանգիստ դիտեց իր շուրջը տիրող աղմուկը: Իր գորշ աչքերով նա չնայեց դեմքերին, այլ նրա հայացքն արագ անցավ մարդկանց միջով, — ահա ինչո՛ւ յես էլ ասում եմ, թե նա դիտեց աղմուկը: Հետո նա գեանից բարձրացրեց թռչնին, թեվի տակն առավ նրան ու տարավ տուն:

Սկզբում յերեխաներն աղմուկով վազում էյին նրա հետևից, միաժամանակ և հարց ու փորձ անում, թե նա ի՞նչ է մտադիր անել ուրուրին, բայց նա քայլում եր սովորականի պես գլուխը գետին թեքած, և նրա անչարժ դեմքն ու քար լուռթյունը վանեցին յերեխաներին:

Մանուկների համար Չարլի Մենը հետաքրքիր մարդ եր, սակայն նրանք չեյին սիրում փորսորդին և դերադասում էյին միայն իրար մեջ խոսել նրա մասին: Հանդիպելիս՝ հագվազեպ կխոսեյին նրա հետ, այն էլ՝ դժկամությամբ:

Յերը Մենը տուն յեկավ, թռչունն սթափվեց: Ամբողջ մարմնի ուժգին շարժումով նա փորձեց դուրս պրծնել ձեր փորսորդի ձեռքից: Վերջինս, սակայն, իր



յերկաթե մատներով նորից բռնեց ուրուրի վիզը և այն-
պես սեղմեց, վոր թռչնի կլոր աչքերը տարորինակ կեր-
պով շրջվեցին ու լցվեցին արյունով: Չարլի Մենն ու-
րուրի գլուխն իր դեմքին մոտեցրեց և ասաց կարճ ու
կարուկ.

— Կսպանե՛մ, բարեկամս...

Վիզը կռելով, ուրուրը կացով բռնեց Չարլիի ձեռքի
յերեսը: Յավից ու անսպասելիությունից վորսորդը
ցնցվեց, ատամները սեղմեց և թռչնին իր գլխից վեր
բարձրացնելով, ամբողջ ուժով գետնովը տվեց նրան:

Գիշատիչն ընկավ կողքի վրա, սակայն խոկուլն ևեթ
չըջվեց մեջքի վրա, թեվերը բացեց և փռեց իր առջև:

Թռչունն իր կլոր ու վառվող աչքերն անթարթ հա-
ռեց վորսորդի յերկար հասակի և նրա կարմրավուն
դեմքի վրա. նրանք փայլում էին՝ հարձակման սպասե-
լով: Վիզը ճկելով, ուրուրը փոքր ինչ վեր բարձրացրեց
գլուխը և վզի վրայի արորված փետուրները ահավոր
կերպով կանգնեցին ու ցնցվում էին— ամեն մեկը ջոկ
ու բոլորը միասին:

Մենը նայեց իր ձեռքի պատառոտված մսին, վոր-
տեղից առատորեն հոսում էր թանձր ու մուգ արյունը:
Այն ժամանակ նա առողջ ձեռքով ուսից ցած բերեց իր
հրացանը և նշան առավ:

Թռչունն ե՛լ ավելի ձգեց իր ճանկերը, գլուխը
բարձրացրեց և գետնատարած դողացող թեվերով պատ-
րաստ, հրացայտ աչքերով նայեց. սպասում էր...

Չարլի Մենը դանդաղ բարձրացրեց գլուխը և գորշ
աչքերը յերկինք ուղղեց, վոր այդ ուրը այսպես բարձր
էր ու անսահման ջինջ, ու հրացանն իջեցրեց վոտին...

Ապա մի փոքր մտածեց, այլևս հանգիստ նայելով
թռչնին:

Հետո նա հրացանը գետին գրեց, կողքին ընկած
փայտե արկղը վերցրեց ու մոտեցավ ուրուրին, վոր իր
վերջին պայքարի ըուպեյին էր սպասում, արկղի տակ
ձածկեց նրան և առանց շտապելու տուն գնաց:

Կինն ու յերեխաները տանը չէին. նրանք, ինչպես
միշտ, ամառներն անցկացնում էին լճափին ապրող

պապի մոտ: Նրանք, ինչպես դա հայտնի յե դյուզում,
այնքան էլ չէին սիրում Չարլիին:

Տաս ըուպեյից հետո նա նորից դուրս յեկավ: Նրա
ձեռքը հասցնեալ ու կոպիտ կապկպված էր յերեսսորբի-
չով, վոր արդեն խիմել էր արյան մեջ: Մյուս ձեռքին
նա բռնել էր բարակ ու ամուր մի պարան:

Թռչնի վրայից արկղը հանելով նա ծունկի յեկավ
նրա առաջ և ասաց մռայլ.

— Չկուլե՛նք...

Արկղի տակի մթությունից կուրացած, գետին զար-
նրվելու հարվածից ջարդված թռչունը պառկած էր
միշտ նույն՝ կովի պատրաստ դիրքով: Սակայն հիմա
նրա գլուխն անգոր գետին կախվեց և միայն դեղնավուն
կլոր աչքն էր, վոր նայում էր Չարլիի դեմքին:

Յեվ արհամարհում էր նրան:

Չարլի Մենին հաջողվեց թռչնի վոտին պարան ձը-
գել և կապել նրան: Ուրուրը խուլ կռինչ էր արձակում,
կարծես արյունը յեռ էր գալիս նրա կոկորդի մեջ...
Սակայն նա կովի համար չափից դուրս ուժասպառ էր
և ընկճված:

Պարանի մյուս ծայրը նա կապեց ծառին, հետո
թռչնին նայեց, լուռ գլխով արեց նրան և գետնից հրա-
ցանը վերցնելով, տուն գնաց:

Ուրուրն իր դեղին, կլոր աչքը շրջեց նրա հետևից:
Հետո բարձրացրեց թեվերը. բայց նրանք անպոք
կախվեցին...

Այն ժամանակ թռչունն իր տակն առավ մի թեվը և
ամբողջ մարմնով ուժգին շարժում անելով, շրջվեց
կողքի վրա... Նա վոտի կանգնեց...

Թեվերն իջեցրեց. նրանցով գետնին հենվեց և գը-
լուխը թեքելով, ինչպես Չարլի Մենն էր անում քայլե-
լիս, թռավ մեկ... յերկու... ընկավ կողքի վրա:

Կոնչաց չար կովինչով, խեղդված, խուլոտ ձայն հա-
նեց և նորից նստեց, թեվերով գետնի փոշուն հենվելով:
Այսպես նստած, արորված ու ջարդված, նա կախելով
իր գիշատիչ գլուխը, կլոր աչքերով պարանին նայեց,

վոր յերկար, դորշ ու բարակ ոճի պես ձգվում էր նրա վտաքից դեպի ծառը... Չարդոսոված փետուրները ցնցվում էին թեթև դողոցով:

Չարլի Մենը կանգնած էր պատուհանի մոտ և իր դորշ աչքերով ուրուրին էր նայում:

Յերեք օրից թռչունը խելքի յեկավ. նա թռչկոտում էր բակի մեջ, իր հետևից ծանր-ծանր քարը տալով արորված թեփն ու պարանը, թռչկոտում էր և ամեն ինչ դիտում էր դեղին աչքերով,— սուր սրած, ցուրտ գայրույթի թափանցող հայացքով...

Ամեն օր Չարլի Մենը մի քանի կտոր հում միս էր գցում նրան, սակայն վորսորդի ներկայութեամբ ուրուրը բնավ չէր ուտում կերը: Յերբ մսի կտորը մոտ էր ընկնում կառուցին, թռչունն ուղղում էր իր առողջ թեփը և հեռու թռչում, յերբեք չնայելով մսին... Հետո՝ մսի կտորներն աննկատելի կերպով անհետանում էին...

Գյուղի յերեխաների համար մեծ բավականութուն էր գրազվել Չարլի Մենի ուրուրով: Ամեն օր ուրախ խմբերով նրանք հավաքվում էին վորսորդի տան մոտ, բզավում ու ձգավում ուրուրի յերեսին, ծափ տալիս և քարեր չպրտում մոռայլ թռչնի վրա, աշխատելով կայցնել նրա դեղին ու խրոխտ աչքին, վոր չգիտես ինչու, գրգռում էր նրանց:

Յեթե քարը մոտ էր ընկնում ուրուրին, թռչունը խեթ-խեթ նայում էր նրան, անշարժ մնալով: Յեթե մարմնին էր դիպչում— հարվածից ցնցվելով, հեռու էր ցատկում:

Ինչպես միշտ, Չարլի Մենը նստած էր հին, փոքրիկ տան դռանը և յերեխաներին մոտ թողնելով, լուռ հետևում էր ուրուրի հետ նրանց սարքած խաղին: Իր ներկայութեամբ նեղելով նրանց ուրախութունը, նա թեև վոչինչ չէր ասում փոքրերին, բայց բոլորն էլ զգում էին նրա մեռած, պաղ հայացքը իրենց վրա, և յերեխաներից յուրաքանչյուրի համար նա ավելորդ էր այնտեղ... Սուսափելով քարերի հարվածներից՝ տան առջև՝ կանաչի վրա թռչկոտում էր մոռայլ, մեծ ու չար

թռչունը: Իսկ տան դռանը, այտերը ձեռքերի մեջն առած նստած էր յերկար ու նիհար մարդը և նայում էր ուրուրին, յերեխաներին. նայում էր բոլոր ժամանակ, քանի նրանք խաղում էին թռչնի հետ, աշխատելով անվրեպ հարվածով հանել նրա չար աչքը:

Չարլի Մենը լուռ էր: Սակայն պատկերն ավելի վատ էր, յերբ նա ահամա ու դանդաղ մի քանի խոսք էր չըսյրատում յերեխաներին, միատեսակ ձանձրալի ու յեթե կուզեք՝ մինչև իսկ հիմար խոսքեր.

— Դո՛ւք, յերեխեք, յեթե կարողանայիք, ուղենայիք, այս թռչնին մի-յերկու ձուռ ձգել, ավելի լավ կլինեն: Յես կարծում եմ, վոր նրա համար ձտերն ավելի հաճելի յեն, քան քարերն ու ձիպոտները...

Մի ուրիշ անգամ, յերբ փոքրիկ Ջոնստոնը մի վարժ հարվածով վնասեց ուրուրի վտար, Չարլի Մենը տեղից վեր կացավ և, չգիտես ինչու, հայտարարեց յերեխաներին.

— Յես կարծում եմ, վոր այսօր հերիք է, ինչ նա քաշեց ձեր ձեռքից: Յերեխե՛ք, դուք արդեն կարող եք սուռն գնալ...

— Հրեչին յե՞րբ կսպանեք, Մեն, — հարցնում էին նրան յերեխաները:


— Սպանելու համար շատ ժամանակ հարկավոր չե... — պատասխանեց նա:

Այս բոլորը ձանձրալի յեր և սառը ջուր էր լցնում յերեխաների թշնամական յեռանդի վրա, վորոնք իրենց պարզ սրտերի ամբողջ ուժով ու անկեղծութեամբ ասում էին թռչնին: Յեվ տարորինակ էր, վոր այն օրից, յերբ Մենն ուրուրի վտար ծառին կապեց, ինքը համարյա դադարեց անից դուրս գալուց:

Հաճախ, թռչնի տեսքից գրգռված յերեխաները հարձակվում էին նրա վրա: Այդպիսի դեպքերում նա շտապով մեջքի վրա յեր ընկնում, ձանկերը դուրս հանում, կառուցը բացում և այս վիճակով սպասում էր կովի, — ամբողջովին գոզված ու դողացող մարմնով, վորպես վայրենի գայրույթի գունդ ու կծիկ:

Գրգռման այդպիսի բուպեներին Չարլի Մենը վեր էր

6411



կենում նստած տեղից, ձգվում և թվում եր, թե պատ-
րաստվում է մի ինչ-վոր քայլի, վորը իսկույն դրավում
եր յերեխաների ուշադրությունը: Նրանք Չարլի Մենին
եյին նայում, իսկ նա՝ նրանց:

Գորը աչքերի հայացքից վախենում և կարծես
ցրտից կուչ եյին գալիս յերեխաները:

Նման դեպքերում նրանք հեռանում եյին ատելի
գորը թռչնից և ստարոտի մարդուց:

Մի անգամ այդպիսի մի տեսարանից հետո նրանք
թողին՝ գնացին, իսկ Չարլի Մենը մնաց տան դռանը:
Ինչպես միշտ, ձեռքերի մեջն առնելով իր այտերը,
սուր հայացքով նա նայեց ցատկումներից հողնած թռչ-
նին: Վերջինս քիփ կպել եր ծառի բնին, վորից իր պա-
րանն եր փաթաթված, և նրա գլուխը դեպի գետին եր
ծոված, կարծես անտեսանելի կերպով յերկար կյանքի
կամ բազմաթիվ տանջանքների բեռն եր ընկած իր վրա:
Մինչև մուխն ընկնելը Չարլի Մենը նայեց նրան,
սպա վեր կացավ և դանդաղ մոտեցավ ծառին: Թռչունը
ցնցվեց, զզոնացավ. նրա փետուրները չարացած կանգ-
նեցին...

— Ես... ե՛ն չի... բարեկամս, — մըթմըթաց Չարլի
Մենը, գլուխը բացասաբար տարուբերելով:

Յեվ նա մոտ գնաց թռչնին այնպես, վոր սա նահան-
ջելով նրա առաջ, հետ տվեց ծառին փաթաթված պա-
րանը: Սկզբում ուրուրը գիմադրում եր՝ թեվերը թա-
փահարելով, բայց յերբ նա հասկացավ, վոր ծառի շուր-
ջն արվող ամեն մի նոր շրջան պարանը յերկարացնե-
լով, իրեն հեռացնում է մարդուց, — նա արագ ու ե՛լ ա-
վելի արագ թռչկոտեց դետնի յերեսով... Յեվ հան-
կարծ, թեերը թափահարելով խոյացավ, թռավ, կուր-
չեց...

Պարանը հետ ձգեց նրան, թռչունը համարյա նորից
դետին ընկավ՝ թեերը շեղակի թափահարելով: Յեվ
յերբ կանաչուտի վրա նստեց, նրա դեղին, կլոր աչքը
սևեռվեց իրենից յերկու քայլի վրա կանգնած Մենի յե-
րեսին:

Չարլի Մենը դիտեց թռչնին, կանգնած տեղը շուր
յեկավ և, առանց շտապելու, գնաց տուն:

Այնտեղից նա իսկույն եթ դուրս յեկավ և բերեց
հրացանը: Այդպես և առանց շտապելու մոտ գնաց ու-
րուրին և նշան բռնեց:

Պարանը ձիգ ձգած, անշարժ նստած եր թռչունը, և
նրա կլոր աչքը փայլում եր մթության մեջ, նայելով
Չարլի Մենին, նրա — ինչպես միշտ — քարե դեմքին:
Ուրուրի գլուխը մի փոքր աջ եր թեքված: Հանկարծ
Մենը քմծիծաղ տվեց, հրացանը վեր բերեց ուսից և ա-
սաց.

— Սա հիմարություն է, բարեկամս... Պետք չէ, դա
յես դիտեմ...

Նա գլուխը ձոճեց. կարծես թռչունը նույնպես
չարժվեց...

Մենը դետին իջեցրեց հրացանը և զրպանից հանեց
դանակը, ապա զգուշ ձեռքն առավ պարանը և թռչ-
նին դեպի իր կողմը ձգեց: Ուրուրը ցնցվեց, թեերը
թափահարեց՝ պատրաստ գետին չըջվելու և պաշտպան-
վելու...

— Խե՛ղ ունեցիր, — ցած ձայնով ասաց Չարլի Մե-
նը. — հերիք ե, ինչքան հիմարություններ յեղան... հե-
րիք ե մեզ՝ յերկուսիս համար...

Նա հետզհետե ավելի մոտ եր ձգում թռչնին, զգու-
շությամբ դեպի իրեն քաշելով. իսկ ուրուրը, առանց
հայացքն նրանից հեռացնելու տեղի յեր տալիս ույթին
և կտուցը յերկարացնում, դանդաղ բացելով այն,
պատրաստ՝ մարդու գորը աչքը հանելու:

Սակայն Չարլի Մենն արագ ու կարճ հարվածով
կտրեց պարանը թռչնի հենց վոտի մոտ և ինքն իս-
կույն հետ թռավ: — Նրա շարժումից վախեցած թռչու-
նը վերև խոյացավ... ուրախ ու բարձր կանչեց նա և
նորից՝ ասես ազատությանը չհավատալով՝ դետին ի-
ջավ...

Առանց նրան նայելու Չարլի Մենը վերցրեց իր հրա-
ցանը և գնաց տուն...

Նա լսեց, թե ինչպես իր հետևից ծանր-ծանր բախ-
վեցին ուրուրի թեերը — մե՛կ, յերկու և յերե՛ք... հետո

197

125

մթության մեջ լավեց մեծ ու ծանր թռչունի սուբալու
հազիվ լսելի աղմուկը ողում...

Մարդը գլուխը թեքեց և առանց հետ նայելու քաշ-
վեց սուն...

... Առավոտյան յերեխաները նորից հայտնվեցին,
բայց թռչունը չկար, իսկ Չարլի Մենը վորսորդական
չորեր հագած, յեռանդով յուղ եր քսում հրացանին:

— Իսկ ո՞ւր ե միաչքանի հրեշը, — բացականչեցին
յերեխաները:

Դա Չարլի Մենին չէր վերաբերվում և նա լուռ եր:

— Իսկ ո՞ւր ե ձեր թռչունը, միստեր Մեն, — հար-
ցրին յերեխաները, վորսորդին շրջապատելով:

Նա դեպի յերկինք բարձրացրեց իր կարմրավուն
դեմքը և առանց շտապելու պատասխանեց.

— Թռչունը թռավ... այնպե՛ս դա անհրաժեշտ եր
նրա համար:

— Դուք բա՞ց թողիք նրան, — դարմացած ու հիաս-
թափված բղավեցին յերեխաները: — Բաց թողիք, վոր
նա նորի՞ց հավեր փախցնի: Հիմա՞, յերբ ամենքի տա-
նը ձեռե՞ր կան: Եհե՞ միստեր Մեն:

— Յես նրան ասացի, — չթռնե՞նքը տարօրինակ
կերպով ծոմոելով, խոսեց Չարլի Մենը, — յես ասացի
նրան, վոր նա այլևս չհանդիպի ձեզ... Բայց այն մա-
սին, թե նա ինչպես պետք ե վարվի ընտանի թռչուննե-
րի հետ... յես կարծեմ մոռացա ասել նրան... Հա՛, յես
մոռացա...

... Այդ որից ամբողջ շրջանում նշանավոր վոր-
սորդ Չարլի Մենին այլ անունով չեն կանչում, քան
պառավ եչ:



3055

Գինը 50 կոմ.

М. ГОРЬКИЙ
ЧАРЛИ МЕН

Դէզ Արմ. ՍՍՐ, Երևան, 1940 թ.